



COVID-19-ի թեստերի տեսակները

- Վիրուսային թեստը կարող է ցույց տալ՝ արդյոք անձը **տվյալ պահին ունի COVID-19 վարակ**: Գոյություն ունեն երկու տեսակի վիրուսային թեստեր, որոնք օգտագործվում են COVID-19-ի ախտորոշման համար՝ նուկլեինաթթվի ուժեղացման թեստեր (ՆԱԹ/ՊՇՌ) և հակազենի թեստեր: Այդ թեստերը ստուգում են՝ արդյոք ախտանիշներ ունեցող անձը վարակված է COVID-19 վիրուսով: Դրանք օգտագործվում են նաև ախտանիշներ չունեցող մարդկանց ստուգման համար: Այդ թեստերը հանդիսանում են քթից կամ թքից վերցված նմուշի թեստեր:
- Հակամարմինների թեստը (հայտնի է նաև որպես սերոլոգիական (շճաբանական) թեստ) կարող է ցույց տալ՝ արդյոք անձը **նախկինում** եղել է վարակված: Դա արյան հետազոտության թեստ է: Հակամարմինների թեստը չի կարող հայտնել՝ արդյոք անձը տվյալ պահին վարակված է COVID-19-ով:

Համոզվեք, որ գիտեք, թե որ տեսակի թեստն եք հանձնում: Եթե դուք թեստ եք հանձնում դպրոցների, միջոցառման վայրերի կամ սպորտային մրցաշարերի պահանջները բավարարելու համար, հավաստիացեք, որ հանձնում եք իրենց պահանջները բավարարող ճիշտ թեստը:

Որտեղ թեստ հանձնել



Եթե ձեր երեխան ունի աշխտանիշներ, լավագույն տարբերակը կլինի ձեր երեխայի բժշկից կամ տեղական բժշկական կենտրոնից թեստ ստանալը: Չանգահարեք 2-1-1 կամ այցելեք [211LA](https://www.211la.org), եթե ձեզ անհրաժեշտ է օգնություն բժիշկ գտնելու համար: Դուք նաև կարող եք գտնել ձեզ մոտիկ բժշկական կենտրոն՝ [HRSA.gov կայքէջում](https://www.hrsa.gov/kaypetyun) մուտքագրելով ձեր փոստային ինդեքսի համարը (zip code):

Թեստ ստանալու համար բազմաթիվ վայրեր կան.



- **Դեղատուն:** Շատ դեղատներ առաջարկում են COVID-19-ի անվճար վիրուսային թեստեր: Մանրամասների համար զանգահարեք կամ այցելեք սրանց կայք:
 - **Walmart՝ [Quest Diagnostics](#)-ի հետ՝** 2 տարեկան և ավելի բարձր տարիքի համար
 - **[CVS Health](#)** և **[Walgreens](#)**՝ 3 տարեկան և ավելի բարձր տարիքի համար
 - **[Rite Aid](#)**՝ 4 տարեկան և ավելի բարձր տարիքի համար
 - **Անկախ դեղատներ՝** այցելեք doineedacovid19test.com



- **Ձեր երեխայի դպրոցական կամ երիտասարդական մարզական միություն:** Շատ դպրոցներ և դպրոցական շրջաններ տրամադրում են COVID-19-ի անվճար թեստավորում աշակերտներին, աշխատակիցներին և կամավորներին: Կապ հաստատեք ձեր երեխայի դպրոցի կամ մարզական միության կազմակերպիչների հետ՝ իմանալու՝ արդյոք թեստավորումը հասանելի է և թե ինչպես թեստավորվել:



- **Շրջանի կոմից հովանավորվող թեստավորման կենտրոններ:** Այդ կենտրոններն առաջարկում են անվճար ՊՇՌ (PCR) թեստավորում Լոս Անջելեսի Շրջանում բնակվող բոլոր անձանց՝ անկախ ներգաղթի կարգավիճակից: Շատ կենտրոններ թեստավորում են բոլոր տարիքի երեխաներին: Մինչև 16 տարեկան երեխաներին պետք է ուղեկցի մեծահասակ անձ, ումից կարող է պահանջվել վերցնել նմուշ երեխայից: Այցելեք [covid.19.lacounty.gov/testing](https://www.covid.19.lacounty.gov/testing) կայքէջ՝ երեխաների համար թեստավորող կենտրոններ գտնելու և ժամադրություն նշանակելու համար: Եթե օգնության կարիք ունեք, կարող եք նաև զանգահարել 2-1-1 համարով՝ թեստավորումը կազմակերպելու համար:



- **Շրջանի կոմից չհովանավորվող թեստավորման կենտրոններ:** Որոշ կենտրոններ ղեկավարվում են մասնավոր ընկերությունների, մասնավոր առողջապահական համակարգերի կամ քաղաքների տեղական իշխանությունների կողմից, և այդ կենտրոնները չեն ստուգվում Լոս Անջելեսի Շրջանի կողմից:
 - Հնարավոր է, որ նրանք երեխաների թեստավորում առաջարկեն: Հարցրեք տարիքային սահմանափակումների մասին:
 - Հնարավոր է, որ նրանք պահանջեն վճարել թեստի համար: Նախապես հարցրեք՝ արդյոք պետք է վճարումներ անեք:
 - Հնարավոր է նաև, որ նրանք այնպիսի տեղեկություն հայցեն, ինչպիսիք են կառավարության կողմից տրված նույնականացման քարտը (ID) կամ ապահովագրությունը:



Թեստավորում տանը

Տնային հավաքագրման փաթեթներ: Դուք վերցնում եք նմուշը, և այն թեստավորվում է լաբորատորիայում:

ՊՇՌ թեստային փաթեթները հասանելի են 4+ տարեկան մարդկանց համար, ովքեր ապրում են Լոս Անջելեսի Շրջանում և ունեն արտանիշներ կամ կարծում են, որ շփվել են COVID-19-ով վարակված անձի հետ: Արդյունքները սովորաբար հասանելի են լաբորատորիայի՝ թեստը ստանալուց 24-48 ժամ հետո: Փաթեթները, թեստավորումը և փոստային առաքումն անվճար են Շրջանի ծրագրի միջոցով.

- **Առցանց պատվիրեք փաթեթը:** Փաթեթը փոստով ուղարկվում է ձեր տուն, և դուք այն փոստով վերադարձնում եք լաբորատորիա:
- **Վերցրեք թեստի փաթեթը** Լոս Անջելեսի Շրջանի որևէ կենտրոնից: Վերցրեք նմուշը տանը կամ ձեր մեքենայում և վերադարձրեք այն նույն կենտրոն:

Մանրամասների համար այցելեք [covid.19.lacounty.gov/testing](https://www.covid.19.lacounty.gov/testing):

Ինքնուրույն արվող թեստեր: Դուք վերցնում եք նմուշը, և ինքներդ եք անում թեստը: Արդյունքը սովորաբար հասանելի է 15-30 րոպե անց:

- **Պատվիրեք անվճար թեստեր [COVIDtests.gov](https://www.covidtests.gov)** հասցեով: Դուք կարող եք փոստի միջոցով ստանալ 4 անվճար արագ թեստ յուրաքանչյուր ընտանիքի համար:
- **Դեղատնից, առցանց կամ խանութից,** ինչպիսիք են հանրախանութը կամ մեծածախ վաճառքի խանութը:

Առողջության ապահովագրություն ունեցող մարդկանց մեծամասնությունը կարող է ինքնուրույն արվող թեստերը ստանալ **անվճար**: Տեղեկությունների համար կապ հաստատեք ձեր ապահովագրական ծրագրի հետ: Եթե գնաք խանութ, և նրանք չընդունեն ձեր ապահովագրությունը, պահպանեք ձեր կտրոնները: Առողջության ապահովագրությունների մեծ մասը մասնակի կամ ամբողջությամբ կհատուցեն այդ գումարը: Շատերը ծրագրում ներառված ամեն անձի համար վճարում են ամսական մինչև 8 տնային թեստերի դիմաց: Մանրամասների համար տե՛ս [CMS-ի կայքէջը՝ առանց դեղատոմսի դեղերի համար](#):

ՀՈՒՇՈՒՄ: Ստուգեք [FDA-ի կայքէջը](#), որպեսզի տեսնեք՝ արդյոք ձեր թեստը թույլատրված է: Ինքնուրույն արվող որոշ թեստեր կարող են տարիքային սահմանափակումներ ունենալ: Տեսե՛ք թեստերի փաթեթների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [CDC-ի ինքնություն արվող թեստերի կայքը](#):



Չգուշացեք COVID-19 թեստավորման խաբեություններից և խարդախություններից

Առևտրի Դաշնային Հանձնաժողովը (FDC) տեղեկատվություն ունի այն մասին, թե [ինչպես խուսափել կեղծ թեստային փաթեթներ առցանց գնելուց](#) կամ [կեղծ թեստային կայքերից](#) օգտվելուց:

Այցելեք DPH-ի [COVID-19-ի խաբեությունների և խարդախությունների կայքէջը](#), որպեսզի իմանաք COVID-19-ի հետ կապված հաճախակի հանդիպող խաբեությունների և խարդախությունների մասին:

Եթե կարծում եք, որ գտել եք COVID-19-ի կեղծ կայք կամ գնել եք COVID-19-ի կեղծ թեստ, ինդրում ենք հայտնել **Սպառողների և Բիզնեսի Հարցերի Վարչություն**՝ bit.ly/DCBAHelp կայքում կամ **1-800 593-8222** հեռախոսահամարով:

COVID-19-ի թեստերի վերաբերյալ հավելյալ տեղեկությունների և ձեր թեստերի արդյունքների նշանակության մասին իմանալու համար այցելեք՝ ph.lacounty.gov/covidtests: